

5495

321

U-47

1906

119)

Յօգուտ Բաժումի անդարձ հայ բանուորների:

№ 2


Ս. Յարութիւնեան,

167

**Ի՞նչ է
ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ.**

Ի. Սիգովից.

Բաժում
Տպարան Ն. Պ. Գուրսկու
1906



2010

Յօգուտ Բաժումի անդամ Հայ բանւորների:

№ 2

321

Ս. 47 Ս. Յարութիւնեան.

ԹԻԼ
114




ԻՆՁ Է ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ.

Ի. Սիգո վից.



Բաժում
Տպարան Ն. Պ. Գուրսկու:
1906




ԻՆՁ Է ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Ամեն տեղ մարդ ազատ է, Չկայ անգաղութիւն միայն Ռուսաստանում և ծանկատանում:

Ազատ երկիրներում ամեն մարդ աներկիւղ և՛ խօսում է, և՛ զրում ամեն բանի մասին իր սեպհական հասկացողութեամբ, և ոչ որ նրան դրա համար ոչ քաշ է տալիս ոստիկանատուն, ոչ ծեծում մտրակով, ոչ նստեցնում բանդ և ոչ էլ արսորում Սիրիբ: Իհարկէ, ամեն տեղ կան տարբեր խելքի և տարբեր հասկացողութեան տէր մարդիկ, բայց խելօքի հետ միասին նոյն կերպ ազատ խօսում է ամեն բանի մասին և յիմարը-և դրանից ոչ որ միասնիկ կրում, որովհետեւ միեւնոյնն է յիմարին լսող չի լինում. ամեն մի խելացնոր կամ սխալ միտք քննադատում են ուրիշները, ցոյց են տալիս նրա ինչի մէջ սխալ լինելը, ապացուցանելով թէ՛ որ դատողութիւնն իսկապէս ուղիղ է: Այնտեղ ուր խօսքի ազատութիւն է, ոչ մի սխալ միտք, ոչ մի սխալ դատողութիւն չէ կարող վրիպել քննադատութիւնից: Այն երկիրներում, ուր խօսքի

50773-Ա.Լ.



36844-66

2701

ազատութիւն է, բոլորն էլ գիտեն թէ ինչ է կատարուում պետութեան մէջ և ամեն ոք պետական գործերի վերաբերմամբ ունի իր սեպհական կարծիքը: Այնտեղ ամեն մարդ գիտէ, թէ ով է պետական մարդկանցից ժողովրդի կողմը և ով հակառակ. լաւ է կառավարութիւնը՝ թէ վատ և թէ ինչ պէտքէ անել, որ կառավարութիւնը ստիպուած լինի ծառայել ժողովրդի շահերին:

Ազատ երկիրներում ամեն մարդ բացարձակ ընտրում է այն դաւանանքը, որը նա իր խղճով ուղիղ և արդարացի է համարում և ոչ ոք չի խառնում այդ գործի մէջ, ոչ ոքի հոգն էլ չէ այդ, որովհետեւ խօսմ չէ կարելի փայտով արքայութիւն քշել, ստիպել մարդուն հաւատալ ուրիշ կերպ, քան այն՝ ինչ որ թելադրում է իր սեպհական խիղճը:

Ազատ երկիրներում բոլոր քաղաքացիք ազատ և աներկիւղ հաւաքւում են, ինչպէս իրենց կարիքների, նոյնպէս հասարակական և պետական գործերի մասին խորհրդակցելու: Ժողովներում ամեն մարդ ազատ խօսում և քննադատում է թէ՛ որքան կառավարութիւնը տուրքերի հաւաքում, — ժողովրդից հաւաքած այդ փողերի ծախսելը, — կանոնաւոր է կատարում, թէ կառավարութիւնն երկիրն այնպէս է կառավարում ինչպէս ժողովուրդն է ցանկանում. չէ փայփայում արդեօք հարուստներին և ուժեղներին, թէ

ինչ պէտքէ պահանջել կառավարութիւնից և ինչ արգելել նրան: Ազատ երկիրներում կառավարութիւնը զոյլութիւն ունի ժողովրդի համար և ծառայում է նրան: Ուստի, երբ կառավարութիւնը (Մինիստրների խորհուրդը) նկատուում է անպէտք, ժողովրդի պահանջումով նա հեռացնում է և նրա տեղը տրւում է ուրիշը. եթէ, ի դէպս՝ մինիստրները կամ միւս պաշտօնեաները թոյլ են տալիս մի որ և է զեղծմունք, նրանց դատում են երդուեալ դատաւորները և մեղաւոր ճանաչուելու դէպքում, նրանց կամ տուգանքի են ենթարկում, կամ բանդ են նստեցնում և կամ արսորում. նայելով թէ՛ որքան մեծ է յանցանքն և թէ օրէնքով ինչ պատիժ է հարկաւոր տալ այդ յանցանքի համար:

Ազատ երկիրներում բոլորեքեան իրաւունք ունին կազմել ընկերութիւններ, ընկերակցական միութիւններ, առանց մի որ և է թոյլտուութեան՝ ինչ նպատակի համար էլ որ լինին, եթէ միայն այդ միութիւնները չեն ուղղուած ի վնաս ժողովրդի. մինչև անգամ, եթէ այս կամ այն ընկերութիւնները կամ միութիւնները շատ էլ դուրեկան չլինին կառավարութեան կամ պաշտօնեաներին՝ փակել դրանց կամ խառնուել նրանց գործերի մէջ, նրանք չեն կարող — իրաւունք չ'ունին. ցանկանան էլ՝ նրանց ժողովուրդն այդ թոյլ չի տալ:

Ազատ երկիրներում բանւորներն իրաւունք ունին պահանջելու իրենց աշխատանքի արդար վարձը, և որովհետեւ վարձի յաւելումն և աշխատանքի ժամերի կրճատումն միմիայն կարելի է ձեռք բերել կռուով, միասին—բանւորների ընդհանուր համաձայնութեամբ, ուստի բանւորները կազմակերպում են գործադուլներ, որպէս զի գործի ընդհատման և անյետաձգելի պատուէրների չկատարելու երկիւղի ազդեցութեան տակ՝ ստիպեն գործարանատէրերին տեղի տալու—զիջում անելու։ Գործադուլն ամենալաւ և ամենաուղիղ միջոցն է, եթէ միայն բանւորները սովորել և ընտելացել են միասին, միախորհուրդ, ընդհանուր համաձայնութեամբ գործելու։ Չի-նէին գործադուլները, բանւոր դասակարգը բնդ միշտ մատնուած կլինէր աղքատութեան—զրուկանքի և աղիստութեան, որովհետեւ ոչ ոք չէր մտածիլ նրա մասին։ Իսկ եթէ, մինչև անգամ, մի քանիսը գործարանատէրերից մտածէին, ինքնաբերաբար ցանկանային օրավարձն աւելացնելու, մարդավայել վիճակ ստեղծելու—չէին էլ կաշոյ այգ անել, որովհետեւ միւս գործարանատէրերը պակաս օրավարձ վճարելով կխեղտէին նրանց իրենց անհամեմատ արժան արդիւնաբերութիւններով։ Գործադուլներն ու բանւորական միութիւնները ոչ միայն օգտակար են, այլ նոքա՝ ևս առաւել, անհրաժեշտ են,

որովհետեւ գործարանատէրերը նոյնպէս իրենց մէջ կազմում են գաղտնի համախմբումներ, ընկերակցութիւններ, որպէս զի մէկը միւսի ապրանքի արժէքը, չփչացնէ, իւր ապրանքը հնար եղածին չափ աւելի բարձր գնով ծախէ և հնար եղածին չափ բանւորի օրավարձը պակաս վճարէ։ Իսկ երբ հարուստներն ու ուժեղները յայտարարում են գործատու, ինչ է լինում բանւոր դասակարգի դրութիւնը առանց նրանց.—բնականաբար շատ ծանր։ Յաւալին այն է, որ մեզանում—Ռուսաստանում՝ կառավարութիւնը թէ թոյլ է տալիս և թէ օգնում գործարանատէրերին գործադուլներ անելու,—իսկ բանւորութեան ոչ միայն չէ թոյլ տալիս, այլ պատժում, բանդարկում, մինչև անգամ արքայութեւ Սիբիր։ Չաքարի գործարանատէրերը, օրինակ՝ խօսքը մէկ են անում, գաղտնի համախմբումներ են կազմակերպում ելևմտական մինիստրի օգնականի նախագահութեամբ և այդ առաջ են տանում, այնքան շահաւէտ իրենց օգտին, որ մեր չաքարը, այստեղ՝ Ռուսաստանում, ծախւում է ֆունտը 16 կոպէկով, մինչդեռ այդ միենոյն մեր ռուսական չաքարը Անգլիայում ծախւում է ֆունտը 5 կոպէկով։

Ընորհիւ այս հանգամանքի ռուս գիւղացու համար—չաքարը մի անմատչելի շռայլութիւն է համարւում. մինչդեռ անգլիացիք ռուսական

արժան չաքարով ձեռնտու են գտնում կերակրել իրենց խոզերին:

Ազատ երկիրներում իւրաքանչիւր մարդու անձն անձեռնմխելի է: Ոչ մի իշխանութիւն, ոչ մի պաշտօնեայ՝ առանց դատարանի և քրէնութեան՝ չի համարձակուում զրկել նրան ազատութիւնից—մի որ և է պատժի ենթարկել: չի համարձակուում վերաւորել խօսքով կամ գործով: Միայն մեղանում և Տաճկաստանում է, որ բռնում են մարդկանց օձիքից՝ ձգում են սառցատուն, ծեծում են մերձիմահ ոստիկանատներում: Միայն մեղանում և Տաճկաստանում է, որ իշխանութիւնը ստրկանում է հարուստների և ազդեցիկ մարդկանց առաջ, իսկ ժողովրդի հետ վարում է ինչպէս անասունի: Միայն մեղանում է, որ ամեն մի խարդախ, ճարպիկ ու ողորմելի ոստիկան, մի ենթասպայ, մինչև անգամ մի հասարակ պահապան, ժանդարմ կամ մի գործողովոյ համարում են իրենց ինքնակալներ: Ազատ երկիրներում այդ չկայ. ազատ երկիրներում մարդկային անձնաւորութիւնն ամեն բանից վեր է հաշւում: Ինչ տեսակ մարդ էլ որ լինին—յայտնի թէ հասարակ, հարուստ թէ աղքատ, այդ միևնոյնն է—անձնաւորութիւնը, մարդկային արժանապատուութիւնը և նրա պատիւը նուիրական են թէ բարձր և թէ ստորին պաշտօնեաների համար:

Եթէ ինձ, հասարակ մահկանացուիս, գուցէ ամենավերջին մարդուն՝ վիրաւորէ ազատ պետութեան բարձրաստիճան մի որ և է պաշտօնեայ, ես նրան քաշ կտամ դատարան: Եթէ զինեալ պաշտօնեաները (ժանդարմներ կամ ոստիկաններ) հակառակ օրէնքի՝ ինձ ոստիկանատուն քաշ տալու լինին, ես կարողեմ զէնքը ձեռքիս պաշտպանուիլ, և եթէ ես նրանց սպանեմ, պաշտպանելով իմ անձն, իմ կեանքը, ինձ կ'արդարացնէ դատարանը. իսկ եթէ նրանք ինձ սպանեն՝ կ'ենթարկուին տաժանակիր աշխատանքի:

Ազատ երկրում իշխանութեան պաշտօնեաները՝ ինչ բանում էլ որ կասկածելու լինին ինձ վերայ, իրաւունք չ'ունին առանց դատարանի որոշման, ներս խուժել իմ բնակարանը: Իրաւունք չ'ունին խուզարկել, քրքրել իմ թղթերն ու նամակները, իսկ եթէ նրանք այդ իրենց թոյլտան, այն ժամանակ ես իրաւունք ունեմ նրանց հետ վարուել ինչպէս աւազակների հետ:

Այս բոլորը—խօսքի ու մամուլի ազատութիւն, խղճի ազատութիւն, ազատութիւն ժողովների, միութիւնների, գործադուների, անձի ու գոյքի անձեռնմխելիութիւն՝ կոչւում է քաղաքական կամ քաղաքացիական ազատութիւն: Ժողովրդի համար ազատութիւնն անհրաժեշտ է այնքան, որքան օդն ու արեգակը բոլոր կենդանի արարածների համար: Առանց ազատութեան չկայ յառաջագիմութիւն: Զրկուե-

լով ազատութիւնից, մարդս կորցնում է այն ամենալաւ պարգեւը, որ բնութիւնը լիառատ նուիրաբերել է նրան: Թէ ինչպիսի սքանչելի ոյժ է պարունակում իւր մէջ ազատութիւնը և թէ ինչպիսի չարիք և վէրքեր են ոստիկանութեան ու շինովնիկների կամայական ինքնիշխանութիւնը պետական օրգանիզմի վերայ, մենք մինչև անգամ անընդունակ ենք դարձել այդ երեակայ ելու, որովհետև հարիւրաւոր տարիներ մեզ միշտ կառավարել են փայտն ու մտրակն և մենք արդէն մոռացել ենք թէ ինչ է նշանակում լինել ազատ: Հարիւրաւոր տարիներ ուս ժողովուրդն ապրել է խաւարի և չքաւորութեան մէջ, ընդ միշտ ուժասպառ լինելով աշխատանքի վերայ, բայց միշտ քաղցած, միշտ մերկ և ապագայի վերաբերմամբ ոչ մի մխիթարական յոյս չ'ունենալով: Ընդհակառակը, որքան այսպէս շարունակուել է, այնքան վատացել, այնքան ծանրացել է կեանքը: Ինչից է այդպէս եղել և ո՞վ է այդ բանում մեղաւոր—ժողովուրդը չգիտէր, նա չգիտէր նոյնպէս թէ ինչպէս դուրս գար այդ յաւիտենական աղքատութիւնից ու խաւարից: Իսկ իշխանութիւնը շատ լաւ գիտէր, որ խաւար ժողովրդին կառավարելն աւելի յարմար էր և աւելի հեշտ նրան կեղեքելը: Այդ պատճառով նա արգելում էր արդարութիւնը խօսել ծանր պատիժների երկիւղի տակ: Կենդանի

խօսքի գլխին կանգնած էր ժանդարմ, իսկ տըպագրութեան—ցենզուրան: Իշխանութիւնը միշտ վախեցել է ճշմարտութիւնից, ինչպէս չումայից. նա միշտ սարսափել է ժողովրդի գիտակցութեան արթնանալուց: Բայց հայրենիքի ընտիր զաւակները չէին կարող անտարբեր նայել ուս ժողովրդի այդ տանջանքներին. նրանք ձգտում էին զէպի ժողովուրդը. նրանք կուում էին նրա ազատութեան և բաղդաւորութեան համար. իսկ ժողովուրդը—ժողովուրդն ոչինչ չգիտէր նրանց գոյութեան մասին: Նրանք նահատակուեցան մէկը միւսի ետեից՝ կախաղանի վերայ, տաժանակիր աշխատանքներում, արստրավայրերում, մաշուեցան բանդերում: Քանի՞ քանիսը դրանցից կործանուեցան, այդ մարտիրոսներից, այդ ազնիւ, շիտակ և անձնագոհ հերոսներից ժողովրդի ազատութեան և բաղդաւորութեան համար—ո՞վ կարող է հաշուել:

Անցան այն ժամանակները. այժմ խօսքի ազատութիւն է, իսկ մամուլը արդէն առանց իշխանութեան թոյլտուութեան է հրատարակում—խօսում է նա առանց քաշուելու. բայց այդ լինում է, ոչ թէ նրա համար, որ կառավարութիւնը յայտարարել է Ռուսաստանում մամուլի ազատութիւն, — ոչ: Բոլոր լրագիրներն իրենք իրենց ազատութիւն տուին, բոլորը միասին միանգամից գաղարեցրին ցենզուրային յօդուածներ


ուղարկելը, միմեանց խօսք տուին կամ բռն-
 րովին լոյս չտեսնել, կամ լոյս տեսնել ազատ:
 Եւ միայն այժմ է ռուս ժողովուրդն իմանում
 արդարութիւնը, այն արդարութիւնը, որ հա-
 րիւրաւոր տարիներ ծածկում էին նրանից, որի
 համար անթիւ հերոսներ նահատակուեցան մար-
 տիրոսական մահով: Միայն այժմ է ժողովուրդն
 իմանում, թէ ինչպէս են վարուել պաշտօնեա-
 ները ժողովրդի հարստութեան հետ, թէ ինչ-
 պէս են կողոպտել պետութեան գանձարանը,
 թէ ինչպիսի օրէնքներ են հրատարակել, որքան
 անմեղ արիւն են թափել, թէ ինչպէս նրանք
 աւերակ են դարձրել ռուսական երկիրը, թէ
 ինչպէս, հենց այժմ, նրանք աշխատում են զրբ-
 գուել մութ՝ գիտակցութիւնից զուրկ մարդկանց
 գէպի ժողովրդի ճշմարիտ բարեկամները: Նրանք
 չէին, որ տէրտէրների և ոստիկանների միջոցաւ
 կազմակերպում էին ջարդեր, որի ժամանակ
 գազանացած մարդիկ սպանում, այրում և մոր-
 թոտում էին իրենց անպաշտան եղբայրներին:
 Այո, այդ նրանք են: Բոլոր այդ միլիոն յան-
 ցաւոր պաշտօնեաներն են, որ հէնց այժմ ուզում
 են խաբել ժողովրդին, ուզում են նորից ժողո-
 վրդից ոյժով խլել նրա ազատութիւնը, նորից
 ձգել նրան խաւարի մէջ, որպէսզի նորից տան-
 ջեն, կողոպտեն, կառավարեն նրան, — ինչպէս
 յաւարի հօտ փայտի ու մտրակի ոյժով:

Մեզանից շատ հեռու մի երկիր կայ՝ Նոր
 — Զելանդիա. 80 տարի առաջ այնտեղ ապրում
 էին մարդակերներ, իսկ այժմ այդ երկիրն ամե-
 նաւ ազատ և ամենաբաղդաւոր երկիրն է երկրա-
 գնտիս վերայ, որովհետեւ այնտեղ չկան ոչ
 մուրացկաններ, ոչ քաղցածներ, ոչ անգրագէտ-
 ներ և համարիա չկան մութ և գիտակցութեան
 բացակայութիւնից զուրկ մարդիկ: Ի՞նչու Նոր—
 Զելանդիան յրեթաց 80 տարուայ հասել է
 ծաղկած և փարթամ վիճակի, իսկ Ռուսաստանը՝
 յրեթ թաց 1000 տարուայ՝ աղքատացել է: Որով-
 հետեւ այնտեղ—ազատութիւն է, իսկ Ռուսաս-
 տանում — չինովնիկական—պօլիցեական ինքնիշ-
 խանութիւն: 1000

Ի՞նչու մինչև անգամ կենդանիների աշխար-
 հում ազատութիւնն աճեցողութեան տեսակէ-
 տից ունի արդիւնաւէտ հետեանքներ, իսկ
 գերութիւնը — կործանիչ: Ի՞նչու ազատ կենդա-
 նիները կարողանում են այնպէս լաւ և խելացի
 կերպով հոգ տանել իրենց մասին: Ի՞նչու նրանք
 այնպէս համարձակ և սրամիտ են, իսկ ինչու
 հօտերը, որ կառավարում են մտրակով, այն-
 պէս բութ և անպաշտպան են: Ռուս մարդն
 այլևս չէ ցանկանում ոչխար մնալ. նա պահան-
 ջում է ազատութիւն նրա համար, որ ինքը կա-
 ռավարէ իւր երկիրը, ինքը հրատարակէ օրէնք-
 ներ իւր ընտրած ներկայացուցիչների միջոցով,

ինքը ընտրէ ժողովրդական կառավարութիւնը։
Նա պահամջում է հրաւիրել համայն Ռուսաստանի
համազգային հիմնադիր ժողով, որ նա կանոնաւորէ
պետութեան կառավարութեան եղանակը։
Ժողովուրդը պահանջում է ընդհանուր քուէարկութիւն
ժողովրդի ներկայացուցիչներ ընտրութիւնների համար,
որպէսզի ամեն մարդ, ով էլ որ նա լինի՝ հարուստ թէ աղքատ,
հասարակ թէ անուանի, այր թէ կին, ռուս թէ օտարազգի
իրաւունք ունենայ հաւասար ձայն տալու։
Ընդհանուր քուէարկութեամբ ընտրուած կառավարութիւնը
հոգ կտանէ բոլոր աշխատաւոր ժողովրդի կարիքների մասին,
հողը կբաժանէ գիւղացիներին. մի խօսքով երկիրը կկառավարէ
այնպէս, ինչպէս բոլոր ժողովուրդն ինքն է ցանկանում,
և ոչ այնպէս՝ ինչպէս հարուստ կամ բարձրաստիճան
մարդիկ։ Ժողովուրդն արդէն գիտակցել է իւր
իրաւունքներն և պատրաստ է նրան պաշտպանելու։
Գեղածիծաղ ազատութիւնն արդէն մօտ է. մութ ոյժերին
այլեւ չի յաջողուիլ նրան խեղդել, շուտով նա կփայլէ
ինչպէս մի սլաքաւ, կենսաբեր արեգական արշալոյս
ռուսական երկնակամարի վերայ։

Թող ապրէ ազատութեան արեգակը Ռուսաստանում։



104.

0



Գինն է 10 կոպ.

Handwritten signature or mark.

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0038569

5495

